

## ԹԻՖԼԻՍԱՀԱՅ ԲԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՄՏՔԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

## ՄՎԵՏԼԱՆԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Գիտության յուրաքանչյուր բնագավառ, այդ թվում և հայ բանագիտությունը ձևավորման, զարգացման որոշակի շրջափուլեր է անցել, հաղթահարել բազում դժվարություններ և այդ ճանապարհին ձեռք բերել բանահյուսության արժևորման, բանահյուսական նյութերի գրառման, հրատարակման հստակ եղանակներ ու ավանդույթներ, որոնցով հայ բանագետներն առաջնորդվել և առաջնորդվում են առ այսօր: Բանագիտությունը միշտ էլ սերտ կապերի մեջ է գտնվել պատմության, ազգագրության, արվեստի, գրականության և գիտության այլևայլ բնագավառների հետ, բայց երբեք չի նույնացել դրանց. այն ունեցել է գիտատեսական, գիտագործնական իր ուրույն խնդիրներն ու օրենքները: Իբրև պատմամշակութային կարևոր վավերագրեր, բանագետ-բանահավաքները նյութերը կորստից փրկելու առաջադիր խնդիրը միշտ էլ ծառայեցրել են ոչ միայն աշխարհով մեկ սփռված հայ ժողովրդի տարանջատ հատվածների հոգևոր մերձեցման, այլև նրանց հնագույն քաղաքակրթության բազում խնդիրների բացահայտման հույժ կարևոր գործին: Որո՞նք են այն ուղիները, որոնց հաղթահարմամբ իր ինքնատիպ ուղին է հարթել հայ բանագիտությունը: Այս ուղղությամբ որոշակի աշխատանքներ են կատարվել<sup>1</sup>: Մակայն հայ բանագիտության պատմության անցած ուղու որոշակի շրջափուլերի անաչառ քննությամբ պետք է անդրադառնալ նաև հայակենտրոն այն օջախներին, որտեղ հայ մշակութային գործիչներն իրենց գործուն մասնակցությամբ կարևոր դեր են կատարել հայ բանահավաքչության ու բանագիտության գործընթացների կայացման գործում:

Հայտնի է, որ Թիֆլիսը՝ որպես Անդրկովկասի վարչական կենտրոն, համարվել է հայ մշակույթի ու գիտության խոշոր օջախներից մեկը: 1846 թ. Ռուսական աշխարհագրական ընկերությունն իր մասնաճյուղերից մեկը հիմնել է այդտեղ, որի առաջադիր խնդիրն էր ի մոտո ծանոթանալ իր տիրապետության տակ գտնվող ժողովուրդների, այդ թվում և հայերի նիստ ու կացին, սովորություններին, վարք ու բարքին, հոգևոր մշակութային արժեքներին: Մասնաճյուղն իր գործունեությամբ նպաստել է

<sup>1</sup> 1967 թ. լույս է տեսել Գր. Գրիգորյանի «Հայ ժողովրդական բանահյուսություն», 1985 թ.՝ Ա. Ղանալանյանի «Դրվագներ հայ բանագիտության պատմության», 2010 թ.՝ Ս. Հարությունյանի «Բանագիտական ակնարկներ» ուշագրավ աշխատությունները: Կատարվել են և մենագրական ուսումնասիրություններ՝ ըստ առանձին բանագետ-բանահավաքների [Ս. Հարությունյանի «Մանուկ Աբեղյանի կյանքն ու գործը» (1970), Վ. Սվազյանի «Ս. Հայկունու կյանքն ու գործը» (1973), Ս. Վարդանյանի «Տիգրան Նավասարդյանի դերը հայ բանագիտության պատմության մեջ» (1991), «Միքայել Միանսարյանցի կյանքն ու գործը» (2004), Թ. Հայրապետյանի «Կոնստանդին Մելիք-Շահնազարյանի (Տմբլաչի Խաչան) կյանքն ու գործը» (2007) աշխատությունները]:

Անդրկովկասում ապրող ժողովուրդների գիտական մտքի առաջխաղացմանը. այն իր շուրջն է համախմբել առաջադեմ գաղափարներով տոգորված ռուս և այլազգի, այդ թվում՝ հայ մտավորականության ներկայացուցիչների, որոնք յուրացնելով ընկերության ծրագրերը, ձեռնամուխ են եղել հոգևոր մշակութային արժեքների գրառման, հրատարակման, ուսումնասիրման գործին: Թիֆլիսահայ մտավորական Միքայել Միանսարյանցը (1830–1880) ևս դառնում է ընկերության անդամ և գործուն մասնակցությամբ արձագանքում նրանց ծրագրերին:

Թիֆլիսահայ բանագիտական մտքի զարգացման գործում, սակայն, դրանից առաջ, իր վառ հետքն է թողել Խաչատուր Աբովյանը (1809–1848): Ծնվել է բանահյուսական, ազգագրական ավանդույթներով հարուստ Քանաքեռում, մանկուց լսել ընտանիքում և հասարակական տարբեր հավաքույթներում ժողովրդական երգեր, հեքիաթներ, գրույցներ, մոտիկից շփվելով ժողովրդի կյանք ու կենցաղին, ինչը նրա մեջ ձևավորել է որոշակի մշակելակերպ՝ ժողովրդական բանարվեստի նկատմամբ: Հատկապես Դորպատում ուսումնառության տարիներին (1830–1836 թթ.) առավել ընդլայնվել են բանարվեստի նկատմամբ նրա հետաքրքրությունների շրջանակները: Նա ծանոթ էր Էստոնական գիտական ընկերության ծրագրերին, տիրապետում էր մի շարք օտար լեզուների և, օգտվելով Դորպատի համալսարանի մատենադարանից, ձեռք բերելով ժողովրդական բանարվեստի նկատմամբ հիմնավոր իմացություն, գիտելիքներ, վերադառնում և լայն գործունեություն է ծավալում Թիֆլիսում: Նրա «Վերք Հայաստանի» վեպը, «Թիֆլիսահայոց հանգստարանը» պատմվածքը, «Պարսպ վախտի խաղալիքը» առակների ժողովածուն պայմանավորված են ժողովրդական խոսքն ու գրույցը, բառն ու բանը, կենցաղը, սովորությունները, բարքերը հայ հասարակության լայն շերտերին հաղորդակից դարձնելու կարևորությամբ: Տիրապետելով թիֆլիսահայ բարբառին, նա գրառում է հիշյալ բարբառով ժողովրդական ու աշուղական ստեղծագործություններ (Ազբար Ադամ, Քյարամ, Աշուղ Ղարիբ, Քեշիշ Օղլի): «Թիֆլիսում ապրող հայերի կյանքի մասին» պատմաաշխարհագրական աշխատության մեջ Աբովյանն անդրադարձել է ժողովրդական բարքերին, ընտանեկան, ընկերական, ամուսնական փոխհարաբերություններին: Նա իր ստեղծագործությունների գրոց լեզուն դարձրեց ժողովրդի խոսակցական լեզուն, դրանով ոչ միայն հասարակության լայն շերտերին ընթերցանության ոլորտ ընդգրկելով, այլև՝ կարևորելով բարբառների մշակութային արժեքը: Նրա ավանդույթները ստեղծագործաբար յուրացրեց և զարգացրեց բանագետ-բանահավաքների մի ողջ սերունդ (Գ. Ախվերդյան, Մ. Միանսարյանց, Տ. Նավասարդյան, Գ. Տեր-Ալեքսանդրյանց և ուրիշներ): Գ. Ախվերդյանը (1818–1861) «Աբովյանից անմիջապես հետո, Աբովյանի հետ գրեթե միաժամանակ կանգնեց համազգային գրական լեզվի մշակման, հայ նոր գրականության զարգացման ուղիղ ճանապարհի վրա, հայ բանասիրական միտքը մղեց դեպի ժողովրդական բանահյուսության և բարբառների ուսումնասիրության գործը»<sup>2</sup>:

<sup>2</sup> Հայ գրականության պատմություն, հ. I, Երևան, 1962, էջ 29-30:

1840–50-ական թվականներին թիֆլիսահայ մտավորական, Մայաթ-Նովայի երգերի առաջին հրատարակիչ, բժիշկ Գևորգ Ախվերդյանի գործունեությունը շրջադարձային էր՝ թիֆլիսահայ բարբառի նկատմամբ վերաբերմունք ձևավորելու գործում: Մայաթ-Նովայի ստեղծագործությունների բարբառագիտական հետազոտությունը խթան հանդիսացավ թիֆլիսահայերի խոսք ու զրույցի, բառ ու բանի նկատմամբ նրա պատկերացումների ձևավորմանը և հստակեցմանը: Գ. Ախվերդյանը ձեռնամուխ եղավ թիֆլիսահայերի բանարվեստի նմուշների հավաքմանը: Նախաձեռնությունը միաժամանակ հետախուզական նպատակներ էր հետապնդում: Իր նախաձեռնած գործի դրդապատճառների մասին նա գրում է. «Կուլի մի քանի տարի՝ հավաքում եմ կենդանի աղբյուրից հանած նյութեր՝ ժամանակակից հայ ազգի պատմության համար: Հավաքելիս ունեի միշտ աչքիս տակս խնդիրն, թե դեսուդեն, օտար ազգերու մեջ բնական հայերն ինչպե՞ս են ձևացրել իրանց կյանքն՝ մնալով այլազգի ազդեցության տակն ու ամեն տեղ հեշտությամբ վեր առնելով նրանց սովորությունները, երբեմն լեզուն էլ, հայտնո՞ւմ են արդյոք իրանց կենցաղավարութենում էնպես բուն նշաններ, որ գոյացում ըլին ազգի սեփականությունն ու շնորհքն: Նայելով էս դժվարագույն խնդրուն, որն որ պահանջում է ևս տիրոջ ազգերու բուն ազգայնութենի ճիշտ տեղեկանալն, լավ տեսնում էի, որ ամենից առաջ քննելուն՝ մեկ ժողովրդի խոսած լեզուն է, ու ձեռաց գլուխ դրի լեզվին, որով խոսում են Վրաստանում, մանավանդ Թիֆլիսում բնակվող հայերն, որոնց ինքս քաղաքակից եմ: Էս մտքով ժողովում էի հայերեն առակ, առած, վիճակախաղ ու ամեն տեսակ խաղեր, որն որ պահպանել է ազգն ավել պակաս, թե ավանդութենով, թե գրով, որո չիմանալուն շատ գրկանք է կրել ողորմուկ Հայաստանն»<sup>3</sup>:

Գ. Ախվերդյանը, ձեռնամուխ լինելով բանահյուսական որոշակի ստեղծագործությունների (ջանգյուղումներ, խաղիկներ, առած-ասացվածքներ) գրառմանը, մի քայլ առաջ անցավ իր ժամանակակիցներից՝ բանահյուսության նկատմամբ ձևավորելով նորովի պատկերացումներ՝ քաղաքը ևս դիտարկելով բանահյուսության կենցաղավարման յուրօրինակ միջավայր. դրանով նա հակադրվեց ժամանակին իշխող այն գաղափարախոսությանը, ըստ որի, յուրօրինակ այդ մշակույթը պետք է որոնել միայն խուլ գյուղերում, գրին ու գրականությանն անհաղորդ ռամիկների միջավայրում: Նրա կողմից գրառված նյութերից ստորև ներկայացնում ենք որոշ նմուշներ<sup>4</sup>՝ դրանց բնագրային, սկզբնաղբյուրային կարևորությունն առավել տեսանելի դարձնելու նպատակով.

Տանեղ փախչիս, իղբլեղ՝ վուչ:  
Հոգիս էլավ, տղա չէլավ:  
Վունց ուխտին վրա բուրգ ունիմ:  
Վիր կու քաշիս ծանդր կուլի:

<sup>3</sup> Գ. Ա ի վ եր դ յ ա ն. Գուսանք (Մայաթ-Նովա), Երևան, 1964, էջ 7-8:

<sup>4</sup> Գ. Ախվերդյանի գրառած բանահյուսական փոքրածավալ ստեղծագործությունները (հայերեն և վրացատար հայերեն) պահվում են, Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանում (Գ. Ախվերդյանի ֆոնդ, 7-1, 44-1, 45-1):

*Կուժը ջուր բիրիլումը կու կոտրվի:  
Միրը սովորը կերավ,  
Թանը՝ մոլորը:*

Նրա գրառումներում տեղ են գտել նաև խնամհական-ազգակցական աստիճանակարգերը բնութագրող հետևյալ անվանումները. «նորափեսա, նորահարս, տեքր, տեքերկին, զոնքաճ, անիր, սկեսուր, սկեստառ, ախպեր, քուր, հարս, փեսա, քենի, քենակալ, խեչախպեր, կնքավուր, սանամեր, խնամի»<sup>5</sup>: Ուշագրավ են նաև առկա որոշ ծեսերի, սովորությունների անվանաձևերի վկայակոչումները. «էրեստեսուք, բերանբացեք, փեսատեսուք, խնամիճարք, կնունք, պաս, ուտիս»<sup>6</sup>:

Թիֆլիսահայերի ներընտանեկան կենցաղի ու սովորությունների վերաբերյալ հիշյալ անվանաձևերի հիշատակումները վկայում են, որ XIX դ. 40–50-ական թվականներին հայ ժողովրդի նիստ ու կացի, կենցաղի հետ կապված խնդիրներն արդեն իսկ կարևորվում են հայ մշակութային գործիչների կողմից: 1850-ական թվականների վերջերին՝ Թիֆլիսում հրատարակվող պարբերական մամուլի էջերում («Մեղու Հայաստանի», «Կունկ Հայոց աշխարհի», «Հայկական աշխարհ», «Մշակ», «Փորձ», «Արձագանք», «Նոր դար», «Մուրճ», «Տարագ», «Լուսն», «Հորիզոն») պարբերաբար լույս են տեսնում Հայաստանի տարբեր տեղավայրերից գրառված բանահյուսական տարաբնույթ նյութեր (առած-ասացվածքներ, ավանդազրույցներ, աղոթքներ, հանելուկներ, ծիսերգեր), քննադատական հոդվածներ՝ նվիրված բանահավաքչական աշխատանքներին, բանահյուսական նյութերի գրառումներ իրականացնելու գործում՝ մասնավորապես ուսուցիչների անելիքների վերաբերյալ գիտատեղեկատվական, մեթոդական խորհուրդներ: Մամուլն անդրադառնում է նաև տեսական բնույթի հոդվածների հրապարակումներին: Ուշագրավ են հատկապես «Վահագնի երգի» տաղաչափական առանձնահատկությունների վերաբերյալ Ստ. Մալխասյանցի դիտարկումները<sup>7</sup>:

Կարևոր էր հատկապես Թիֆլիսի Ներսիսիյան դպրոցի դերը՝ աշակերտներին ազգային մտածողությամբ կրթել-դաստիարակելու գործում: Ուսուցիչներն արձակուրդներին կազմակերպում էին գիտարշավներ, այցելություններ Հայաստանի տարբեր գավառներ: Աշակերտները, ծանոթանալով ժողովրդի կյանք ու կենցաղին, բառ ու բանին, բանահյուսական նյութերի առաջին իսկ գրառումները տպագրում էին դպրոցի հրատարակություններում, մասնավորապես պատի թերթի էջերում: Ներսիսյան դպրոցի շրջանավարտներից շատերը հետագայում դարձան ազգային մշակույթի ու գիտության հիմնադիրներ (Խ. Աբովյան, Տ. Նավասարդյան, Հովհ. Թու-

<sup>5</sup> Նույն տեղում, 11-Է:

<sup>6</sup> Նույն տեղում:

<sup>7</sup> Ստ. Մալխասյանց. □Վահագնի երգի□ տաղաչափական առանձնահատկությունները. – «Արձագանք» (Թիֆլիս), 1889, - 17, էջ 254–256:

մանյան, Ստ. Մալխասյանց, Ե. Լալայան և ուրիշներ): 1860-ական թվականներին ժողովրդական կենցաղը, սովորությունները, ժողովրդական պարն ու

երաժշտությունը, տեղական բարբառը, ժողովրդական ոճերն ու դարձվածները որոշակի և հաստատուն տեղ են գրավում Գաբրիել Սունդուկյանի ստեղծագործություններում: Ժողովրդի մտքին ու հոգուն հարազատ այդ ստեղծագործությունները բեմ էին հանվում և արժանանում հասարակության լայն զանգվածների ջերմ սիրուն ու վերաբերմունքին:

XIX դ. 50–60-ական թվականներից հայ ժողովրդի պատմության ու հին մշակույթի խնդիրները ևս դառնում են հայ անվանի մտավորականներ Մ. Էմինի, Հ. Գաթրճյանի, նաև Թիֆլիսի Ներսիսյան դպրոցի հայ գրականության ուսուցիչ Ստ. Պալասանյանի (1837–1889) և այլոց մտահոգության առարկան: Ստ. Պալասանյանի «Հայոց գրականության պատմության» Ա հատորը (1860) նվիրված է առասպելների, ավանդական վեպերի, զրույցների, քնարական բանահյուսության ուսումնասիրությանը: Քննական յուրատիպ մտեցումներով վերոհիշյալ հեղինակները ձեռնամուխ են լինում հիմնականում հայ միջնադարյան պատմիչներ Մ. Խորենացու, Ագաթանգեղոսի, Փավստոս Բուզանդի և այլոց աշխատություններում առկա բանահյուսական ստեղծագործությունների լուսաբանման գործին: Նրանց հետաքրքրությունների բուն նյութը մշակութային այլ խնդիրների հետ հիշյալ պատմիչների աշխատություններում առկա բանահյուսական նմուշներն էին, որոնց օգնությամբ աշխատում էին բացահայտել հայ ժողովրդական բանահյուսության բնույթն ու էությունը, նրա ժանրային առանձնահատկությունները: Հիշյալ մտավորականների առաջադիր խնդիրները համակողմանի լուծում չստացան, քանի որ նրանք սահմանափակվում էին հիմնականում հին և միջնադարյան պատմության շրջանակներում: Բանահյուսական գրառված նյութի, մանավանդ այն ամփոփող ժողովածուների պակասը խոչընդոտում էին տեսական միասնական սկզբունքների բացահայտմանն ու ամրագրմանը: Հաշվի առնելով գործի հրատապությունն ու կարևորությունը՝ Միք. Միանսարյանցը, ստեղծագործաբար յուրացնելով իր նախորդների փորձն ու իմացությունը<sup>8</sup>, ձեռնամուխ է լինում իր «Քնար հայկական» ժողովածուի հրատարակմանը. այն լույս է տեսել 1868 թ. Ս. Պետերբուրգում:

Ի դեպ, Ղ. Ալիշանը և Գամառ Քաթիպան ժողովրդական ու ժողովրդական ոճով գրված հեղինակային ստեղծագործությունները մեկտեղել են իրենց ժողովածուներում<sup>9</sup>, որով և դրանք կորցրել են իրենց բանահյուսական անադարտությունը: Չնայած Միք. Միանսարյանցի կողմից ժողովրդական և ժողովրդական ոճով գրված հեղինակային ստեղծագործությունների միջև գոյություն ունեցող, դարձյալ ոչ հստակ պատկերացումներին, սակայն նյութերի մատուցման, դասակարգման եղանակներով նա մի քայլ առաջ անցավ իր նախորդներից՝ «Քնար հայկական» ժողովածուին հաղորդելով աղբյուրագիտական, մասնավորապես բանահյուսական և բանագիտական ուղղվածություն: Հայ բանագիտության հիմնաքարերից՝ Ստ. Պալասանյանի «Երգեր» և Գ. Զարբհանայանի «Գողթան երգեր» խորագիրը

<sup>8</sup> Ղ. Ալիշան. Ռամկական երգք հայոց, Վենետիկ, 1852, Գամառ Քաթիպան. Ազգային երգարան, Սանկտ Պետերբուրգ, 1856:

<sup>9</sup> Տե՛ս նույն տեղում:

կրող հետազոտությունների զետեղումը ժողովածուի առաջին էջերում, իբրև առաջաբաններ, ինքնին հաստատում է դրա բանագիտական ուղղվածության իրողությունը: Պատահական չէր այդ հեղինակների աշխատությունների զետեղումը հիշյալ ժողովածուում: Միք. Միանսարյանը քաջածանոթ էր ժամանակի իշխող բանագիտական ուղղություններին և տեսակետներին, ունեցել է իր որոշակի վերաբերմունքը դրանց նկատմամբ ու առաջնորդվել է հատկապես այն գիտնականների տեսական դրույթներով, որոնք աշխատել են բանագիտական խնդիրներին նոր որակ հաղորդել: Ստ. Պալասանյանի «Պատմություն հայ գրականության» (1860) աշխատությանը տրված նրա հետևյալ գնահատականը հենց վերը նշվածի վկայությունն է. «Շատ պատվական աշխատություն է, արժանի հայագգի երիտասարդների իմաստասիրության: Հեղինակը շատ տեղ հետևել է երևելի Շերր գիտնականի կլասիկական աշխատության և հայեցվածքներին և այս կողմանե էլ արժանի է ազգային գրականությունը առաջադիմության կամեցողների և գնահատողների շնորհակալության»<sup>10</sup>:

1850–60-ական թվականներին ազգային երգարաններ հրատարակելու հայ մտավորականության շրջանում ծավալված հիշյալ աշխատանքներին արձագանքում է նաև Գևորգ Տեր-Ալեքսանդրյանը (1840–1890)՝ 1871 թ. Թիֆլիսում հրատարակելով իր «Լիակատար երգարան» 137 էջանոց ժողովածուն: Հեղինակի խոստովանությամբ՝ երգարանը հեռու է լիակատար լինելուց, քանի որ «Մեկ մարդու համար և մեկ որևիցե քաղաքում անկարելի է ժողովել ամեն հայաբնակ տեղերում երգվող բոլոր երգերը»<sup>11</sup>: Նա ևս ժողովրդական և ժողովրդական ոճով գրված հեղինակային ստեղծագործությունները մեկտեղել է իր ժողովածուում:

Հետզհետե աճում էր թիֆլիսահայ մտավորականության հետաքրքրությունը ժողովրդական բառ ու բանի, սովորությունների հանդեպ: Այն կապված էր ազգային-ազատագրական շարժումների վերելքի ու ազգային ինքնագիտակցության զարթոնքի հետ: Հայ ժողովրդական բանահյուսության գրառման և ուսումնասիրման բուն պատմությունը սկսվում է XIX դ. 70-ական թվականներից, երբ հանդես են գալիս փորձառու բանահավաքներ, մամուլում պարբերաբար հրատարակում են բանահյուսական նյութեր. ի դեպ, դրանք հրատարակվում են նաև առանձին ժողովածուներով: Բանահավաքչության պատմության այս տեղաշարժի հիմնադիրը Գարեգին Սրվանձտյանցն է: Նրանով, փաստորեն, սկսվում է ժողովրդական կենդանի բանահյուսության նմուշների հավաքումն ու հրատարակումը: Գրեթե նույն շրջանում բանահավաքչական աշխատանքներին ձեռնամուխ է լինում թիֆլիսահայ մտավորական Տիգրան Նավասարդյանը (1861–1927). նրա ժողովրդագիտական հավատամքը լավագույնս դրսևորվել է իր հրատարակած «Հայ ժողովրդական հեքիաթներ» առաջին պրակի առաջաբանում: Բանահյուսական հուշարձանների մշակութային-պատմական կարևոր արժեքի և դրանց անդառնալի կորստյան վտանգի գիտակցումն է եղել նրա նախաձեռնած գործի դրդապատճառը: Խոսելով հնագիտական հուշարձանների պատմական արժեքի մասին՝ Տ. Նավասարդյանը նույնքան

<sup>10</sup> Մ. Մի և ն ս ա ր յ ա ն ց. Քնար հայկական, Ս. Պետերբուրգ, 1968, էջ 67:

<sup>11</sup> Գ. Տ Ե ր - Ա լ Ե ք ս ա ն դ ր յ ա ն ց. Լիակատար երգարան, Առաջաբան, Թիֆլիս, 1871:

կարևոր է համարում նաև ժողովրդական բանավոր ստեղծագործությունը կորստից փրկելու խնդիրը. «... Ոչ պակաս հնագիտական նյութ են և մի ազգի ժողովրդյան, այսպես ասած, խոսուն հնությունները, որոնք իբրև նորա մտքի և երևակայության ծնունդ, նորա անցյալ կյանքի, մտավոր զարգացման կենդանի պատկերներն են արտացոլում իրանց մեջ: Այդ հնությունները ժողովրդյան բանավոր վեպերն են, հեքիաթները, ազգային հին երգերը, առակները, հանելուկները, շուտասելուկները, օրհնությունները և այլն, որոնք իբրև սրբազան ժառանգություն, բերնեբերան հասել են մինչև մեր օրերը: Հայերիս մեջ, ցավոք սրտի, պետք է ասել, նոքա դեռևս ռամիկ դասի սեփականությունն են, որոնք հետզհետե զոհ են դառնում ժամանակի անզուր ժանիքներին: Ահա այդ աչքի առաջ ունենալով, այս մի քանի տարի շարունակ իմ թույլ ուժերը նվիրել եմ և այսուհետև էլ նվիրելու եմ այդ նպատակին ծառայելուն»<sup>12</sup>: Նյութական միջոցներ ստանալով Գ. Արծրունուց, ինժեներ Ա. Եսայանից, Բաքվի գիմնազիայի մի խումբ հայ ուսանողներից, Ա. Ծատուրյանից և ուրիշներից՝ Տ. Նավասարդյանը բանահյուսական նյութեր հավաքելու, «ձեռնհաս անձանց» բանահավաքչական աշխատանքների մեջ ընդգրկելու նպատակով ճամփորդում է Վաղարշապատ, Գանձակ, Նոր Բայազետ և այլուր: Նա միաժամանակ նամակներով, մամուլում հրատարակած ազդերով ոգեշնչում, քաջալերում է հայ մտավորականներին՝ հավաքելու և կորստից փրկելու հայ ժողովրդի բանավոր ստեղծագործությունները: Հետզհետե նա դառնում է նաև բանահավաքչական գործի կազմակերպիչ՝ իր շուրջը համախմբելով 40-ից ավելի բանահավաքների, որոնց զրենական պիտույքներ էր ուղարկում և զանազան խորհուրդներով աջակցում՝ համակարգված մոտեցում ցուցաբերելու հավաքչական աշխատանքների նկատմամբ: Տպագրության համար նյութեր են տրամադրում Տիֆլիսից՝ Բ. Նավասարդյանը, Ա. Բահաթրյանը, Ար. Թախրյանը, Գ. Աղանյանը, Գ. Մանդակունին, Երևանից՝ Ա. Աթանասյանը, Ս. Գրիգորյանը, Վաղարշապատից՝ Հ. Աղազադյանը, Ն. Համբարձումյանը, Իգդիրից՝ Ս. Մելիք-Այվազյան-Պահլավունին, Ջաքարյանը, Կարսից՝ Հ. Գազանճյանը, Ախալցխայից՝ Շ. Համբարձումյանը, Շուշիից՝ Հ. Խոջամիրյանը, Ղարաբաղի Նոր Շենից՝ Ս. Հովհաննիսյանը, Գանձակից՝ քահանա Գ. Բաբաքյոխյանը, Պ. Հ. Լիսիկյանը, Ա. Մատինյանը, Գր. Շերմազանյանը, Չարդախլուից՝ Պ. Մանասյանը, Վանից՝ Պ. Գ. Շերենցը, Շնողից՝ Պ. Հ. Մաժինյանը, Պերճ Պոռչյանը Նավասարդյանին է տրամադրում Ալաշկերտում՝ Պողոս Մուրադյանի գրառած բազմաքանակ նյութերը, Մանուկ Աբեղյանը՝ Աստապատում գրառած իր հավաքածուները:

Թիֆլիսը դառնում է բանահյուսական և ազգագրական նյութերի շուրջ ծավալված աննախադեպ շարժման մի յուրատիպ կենտրոն՝ հանձին Տ. Նավասարդյանի, որին սիրահոժար իրենց գրառումներն են ուղարկում բանահավաքները: Տ. Նավասարդյանի կողմից՝ բանահավաքների լայն ցանցի ստեղծման նախաձեռնությունը պայմանավորված էր ոչ միայն հայ հոգևոր մշակութային արժեքների փրկության, բանահավաքչական աշխատանքներին կազմակերպված բնույթ հաղորդելու առաքելությամբ, այլև

<sup>12</sup> Տ. Ն ա վ ա ս ա ռ դ յ ա ն. Հայ ժողովրդական հեքիաթներ, Թիֆլիս, 1882, էջ 1:

աշխարհասփյուռ հայության համախումբ կեցության գաղափարի ամրագրմամբ. ի դեպ, գաղափար, որի իրականացմանն էին ուղղորդված առհասարակ, հայ մշակութաբանների գործունեությունը:

Տ. Նավասարդյանը բազմաժանր նյութերի մի պատկառելի հավաքածու ունենալուց հետո, երբեմն անձամբ շարելով<sup>13</sup> հրատարակում է հայ ժողովրդական հեքիաթների 10 գիրք և «Հայ ժողովրդական ավանդություններ» բազմաժանր ժողովածուն: Նա «Հայ ժողովրդական հեքիաթների» I գիրքը երախտագիտությամբ նվիրում է իր ուսուցչին՝ Ստ. Պալասանյանին: Ժողովածուի հրատարակման գործում խորհուրդներով նրան օգնել են Գ. Տ. Ալեքսանդրյանցն ու Պ. Պոռշյանը: 1903 թ. Տ. Նավասարդյանը հրատարակում է «Բարձրք Արարատյան բարբառի» արժեքավոր աշխատությունը, որը, ըստ հեղինակի վկայության, բացի բուն ժողովրդական բառերից, ոճերից ու դարձվածքներից, ընդգրկում է նաև դժվարիմաց բառերի բացատրություններ, որոնք առկա էին Արարատյան բարբառով իր հրատարակած բնագրերում:

Տ. Նավասարդյանը հրատարակել է 80 հեքիաթ (Արարատյան, Ղարաբաղի, Ղրիմի, Լոռու, Աստապատի, Վանի բարբառներով), ավելի քան 209 հանելուկ, 304 անեծք, 145 օրհնանք, 54 աղոթք, 34 երգում, 18 շուտասելուկ, 46 փաղաքշական խոսք, 1360 առած-ասացվածք, 548 մականուն (Վաղարշապատից), 47 մանկական խաղ, 68 ջանգոյություն, 69 ժողովրդական երգ և ազգագրական նյութեր (հավատալիք, ծես, նախապաշարմունք): Բարձր գնահատելով Տ. Նավասարդյանի գործունեությունը՝ Մակար վարդապետ Բարխուդարյանցը գրում է. «Հավանական է, որ մոտ ապագայում երկու մականուն՝ Սրվանձտյան և Նավասարդյան, Նավասարդյան և Սրվանձտյան միշտ միմյանցից անբաժան պիտի կրկնվին, կրկնվին նրա համար, որ երկու ժրագան և հավատարիմ մշակ հասկացած լինելով ժողովրդական երգերի, ավանդությունների, հեքիաթների ճշգրիտ նշանակությունը, ամենայն խոչընդոտներին և դժվարություններին հաղթահարելով, դիմում են իրենց նպատակին»<sup>14</sup>:

Թիֆլիսահայ բանագիտության մեջ Տ. Նավասարդյանից հետո իր վառ հետքն է թողել Գևորգ Տեր-Ալեքսանդրյանցը՝ «Թիֆլիսեցոց մտավոր կյանքը» ժողովածուով (1885): Դրանում ամփոփված նյութերը նրա 26 տարիների քրտնաջան աշխատանքի արդյունքն են: Ժողովածուի հրատարակման դրդապատճառների մասին նա գրում է. «Բավականաչափ գրքեր կան և հողվածներ հրատարակված, բայց մինչ այժմ չկար մի գիրք (բացի Գ. Ախվերդյանի լույս գցած «Մայաթ-Նովան»), որ ամփոփեր յուր մեջ մեր լեզվի բոլոր գեղեցկությունները և թիֆլիսեցու մտավոր կյանքի պտուղները. այնինչ ուրիշ մեր գավառական բարբառները, օրինակ, վանեցոցը, շատ բազմաթիվ է և շատ բազմակողմանի ժողովածուներ ունին: Եվ այս պակասը լրացնելու համար ես հրատարակում եմ իմ այս ժողովածուն»<sup>15</sup>:

<sup>13</sup> Տ. Նավասարդյանը գրաշարական արվեստին տիրապետել է 1885 թ. Ժնևում, որտեղ և բարձրագույն կրթություն է ստացել (ինժեների մասնագիտություն):

<sup>14</sup> Մ. վ. Բ ա ռ ի ս ո ղ ա ղ ա ն ց. Համով-հոտով, երկասիրեց Գ. Սրվանձտյանց. – «Նոր դար», 1885, -51:

<sup>15</sup> Գ. Տ ե ռ - Ա լ է ք ս ա ն դ ը յ ա ն ց. Թիֆլիսեցոց մտավոր կյանքը, Թիֆլիս, 1885, էջ է:

Գ. Տեր-Ալեքսանդրյանցն իր կոչումը, առավելապես, նյութերը կորստից փրկելու կարևորությամբ էր պայմանավորում: Ուսումնասիրությունները նա համարում էր տեսաբանների խնդիրը: «Այժմ, իմ կարծիքով, դեռ այդպիսի ժողովածուները հրատարակելու ժամանակն է մեր ամեն բարբառներով, իսկ հետո, ինչպես և ուրիշ ազգերու մեջ է եղել, կարելի կլինի ձեռնամուխ լինիլ (իհարկե մասնագետները) և մյուս գործին. այն է՝ նյութերը բաղադատել միմյանց և մյուս ազգերի համանման նյութերի հետ և այդ նյութերի հիման վրա հետազոտությունք անել՝ պատմական, փիլիսոփայական, դիցաբանական, լեզվագիտական և այլն»<sup>16</sup>: Նման մոտեցումը բանահավաքի կողմից պայմանավորված է մշակութաբանների միջև գիտագործնական և գիտատեսական կապերի հաստատման կարևորության գիտակցմամբ: Բանահավաքը ժողովածուի հրատարակման կարևորությունը նաև հետևյալ հանգամանքներով է պայմանավորում. 1. ռուս և եվրոպական ազգերի մեջ շարունակվում են ժողովրդական, մտավոր պտուղների հավաքումը. դրա բացը հայ իրականության մեջ լրացնելուն է միտված իր իսկ նախաձեռնությունը, 2. ժողովածուում ամփոփված նյութերը հիմք պետք է ծառայեին Վ. Դալի «Толковый словарь живого великорусского языка»-ի նման մի բառարանի ստեղծման, որի իրականացմամբ, իր իսկ վկայությամբ «վաղուց էր պարապում», 3. գավառական բարբառներով որքան հնարավոր է շատ ժողովածուների հրատարակումը, քանի որ սովյալ ժամանակաշրջանում բարբառագիտությունը գիտական հետազոտությունների առաջնահերթ խնդիրներից էր<sup>17</sup>:

Գ. Տեր-Ալեքսանդրյանցի վերոհիշյալ ժողովածուի մշակութային պատմական արժեքն այն է, որ եթե նախկինում բանահավաքչությամբ զբաղվողները ժողովրդական մշակույթը որոնում էին միայն խուլ գյուղերում, գրին ու գրականությանն անհաղորդ ռամիկների միջավայրում, ապա Գ. Տեր-Ալեքսանդրյանցը (Գ. Ախվերդյանից հետո) բանահավաքչական պրպտումներն իրականացրեց բազմազգ մի քաղաքում՝ Թիֆլիսում, վեր հանելով տեղի հայ համայնքի մտավոր կյանքը, կենցաղն իր բազմաշերտ խավերով (մտավորականներ, մանր ու խոշոր վաճառականություն, արդյունաբերական, համքարական միջավայր, կինտոներ, յուրատիպ բարբառ, աշուղական ավանդույթներ): Այս ամենի մեկտեղմամբ ու վերհանմամբ Գ. Տեր-Ալեքսանդրյանցը մի քայլ առաջ անցավ իր նախորդներից՝ բանահյուսության կենցաղավարման նկատմամբ ձևավորելով նորովի պատկերացումներ՝ քաղաքը ևս հիմնավորապես դիտարկելով բանահյուսության կենցաղավարման յուրատիպ միջավայր: «Թիֆլիսեցոց մտավոր կյանքը» վերնագրելով ժողովածուն՝ դրանով նա մերժեց ոչ միայն բանահյուսության նկատմամբ ժամանակին իշխող թերարժեքության այն կարծրատիպը, ըստ որի՝ բանահյուսական նյութը կրողին անվանում էին «անուսում, պարզամիտ, ռամիկ ամբոխ», այլև վերահաստատեց ժամանակին Գ. Ախվերդյանի բանահյուսական ստեղծագործությունների կարևորության վերաբերյալ հնչեցրած հետևյալ գնահատականը. «Մրանց մի քանի խաղերից ավելի ենք նկատում ազգային ոգին ու ոճը, քան թե պատմական հաստ-

<sup>16</sup> Նույն տեղում:

<sup>17</sup> Նույն տեղում:

հաստ գրքերից»<sup>18</sup>: 6000-ից ավելի միավոր նյութ պարունակող ժողովածուն նա բաժանել է 18 խմբի. առած-ասացվածքներ՝ 2080 միավոր, օրինանք-բարեմադրանք՝ 137 միավոր, անեծք-հիշոցներ՝ 300 միավոր, սպառնալիք՝ 109 միավոր, ողջույն շնորհավորանք՝ 81 միավոր, ծաղր ու հանաք՝ 86 միավոր, կենսաց՝ 19 միավոր, փողոցե փողոց շրջող մանրավաճառների, կինտոների բացականչություններ՝ 20, զանազան երկրացիների ածականներ և ավելի հին անուններ ու ազգեր՝ 222, երեխանց թոթովանք՝ 59, ոճեր-դարձվածքներ՝ 2700, երդում՝ 109, փառաբանք և խնդրանք՝ 60, հանելուկ՝ 37, աղոթք՝ 23, երեխանց երգեր և խաղ՝ 16, դանդաններ՝ 12, ժողովրդական և աշուղական երգեր՝ 25, ջանգ-յուլումներ՝ 63, հեքիաթ՝ 50:

Ուշագրավ է, որ առած-ասացվածքները Գ. Տեր-Ալեքսանդրյանը ներկայացրել է նախորդ հրատարակիչների օրինակով՝ այբբենական դասակարգմամբ, սակայն գրքի հրատարակումից հետո փորձել է իրականացնել առած-ասացվածքների բովանդակային դասակարգման սկզբունքը՝ հրատարակելով «Թիֆլիսեցու հանճարը յուր առածների ու ասացվածքների մեջ» հոդվածում: Իր նախաձեռնած գործի դրդապատճառների մասին նա գրում է. «Իբրև այդ գործի աշխատասիրող և ավելի մոտիկ ասացվածքների բնավորությանը, փորձում եմ թիֆլիսեցու հանճարը յուր առածների ու ասացվածքների մեջ ավելի շոշափելի կերպով ցույց տալու դիտավորությամբ դասավորել նյութն ըստ բովանդակության, ավելի ամփոփ պատկեր տալու թիֆլիսեցու մտավոր կյանքի, նրա բանաստեղծական ճաշակի ու աշխարհաճանաչողության մասին»<sup>19</sup>: Իր տեսակետները Գ. Տեր-Ալեքսանդրյանը հիմնավորում է կոնկրետ օրինակների վկայակոչմամբ. 1. «Ֆող-իբրև դրամագլուխ» բաժնում նա ներկայացնում է այն առած-ասացվածքները, որոնք բացահայտում են թիֆլիսեցու՝ փողի հանդեպ ունեցած հակադիր վերաբերմունքը. 1) «Փուղը միր պստի Աստուճն ի», «Մարդուս բարեկամը իր ջիբն է», «Ով փուղ ունե, խոսկը նրանն է», 2) փողի արժեքի գիտակցումը («Փուղը պահիլ գուգե»), 3) փողն անիրավությունների է մղում («Փուղի համա իր հորը կու ծախե»), 4) կենսափորձը մարդուն այլ եզրահանգումների է բերում («Փուղը ձեռի կիդտ է», «Ով որ փուղ ունե, խիլք չունե, ով խիլք ունե, փուղ չունե»), 5) թիֆլիսեցին նաև պարտաճանաչ է պարտքի հանդեպ («Ասիլ ին առ ու տուր, խոմ չին ասիլ առ ու կուլ»)՝<sup>20</sup>: Բանահյուսական նյութերին առընթեր, նա նշել է նաև դրանց ազգագրական կիրառությունը:

Գ. Տեր-Ալեքսանդրյանը չնայած սկզբնաղբյուրները իբրև հում նյութ է մատուցել տեսաբաններին, այնուամենայնիվ նաև փորձել է անձամբ լուսաբանել որոշ ժանրերի նկատմամբ իր տեսական ընկալումները: Հայ և այլ ժողովուրդների հեքիաթային սյուժեների գուգորդմամբ, դրանց միջև առկա ընդհանրություններից ելնելով, նա հանգում է տարբերակների առկայության ու միջազգային գուգահեռների խնդրին: «Աշուղ Ղարիբ» հեքիաթի տողատակին նա գրում է. «Այս հեքիաթը հետևություն է հանգուցյալ Գ. Ախվերդյանի հաղորդած ավանդությանը և բանաստեղծ

<sup>18</sup> Գ. Ախվերդյան. Մայաթ-Նովա, 1852, Առաջաբան:

<sup>19</sup> «Արձագանք», 1886, -13, էջ 191-192:

<sup>20</sup> Նույն տեղում:

Լերմոնտովի «Ашик Кериб» անունով հեքիաթի»<sup>21</sup>: Ժողովածուում ներկայացված որոշ հեքիաթներին կից ներկայացվում է հինգ տարբերակի համառոտ շարադրանքը: Գ. Տեր-Ալեքսանդրյանցի «Թիֆլիսեցոց մտավոր կյանքը» ժողովածուն գիտաճանաչողական, սկզբնաղբյուրային կարևորությամբ հայ բանագիտության նվաճումներից է: Հեղինակի մի վկայությունից պարզվում է, որ այս ժողովածուի երկրորդ մասը պատրաստում է տպագրության «Թիֆլիսեցոց սովորությունը» խորագրով, որը «յուր մեջ պիտի պարունակի թիֆլիսեցոց ծեսք, սովորությունը, նախապաշարմունք, ավանդություն»<sup>22</sup>: Հիշյալ ժողովածուի ճակատագիրը, ցավոք, մինչ օրս անհայտ է:

Թիֆլիսը, հետզհետե, դառնում է ոչ միայն բանահավաքչական, այլև՝ հրատարակչական աշխատանքները համակարգող մի յուրատիպ կենտրոն, որտեղ իրենց բանահյուսական հավաքածուներն են հրատարակում նաև արևմտահայ մտավորականները (Ալաշկերտից՝ Պողոս Մուրադյանը, Վանից՝ Գևորգ Շերենցը): Արևմտահայաստանում տեղի ունեցող քաղաքական իրադարձությունները, հայերի նկատմամբ գործադրած բռնարարքները հետզհետե խոչընդոտում էին հայ մտավորականներին, նրանց թվում և Գևորգ Շերենցին (1848–1921)՝ հայրենիքում շարունակելու բանահավաքչական աշխատանքները: 1870 թ. նա ժամանակավորապես մեկնում է Թիֆլիս, զբաղվում մանկավարժությամբ, միաժամանակ սերտ կապեր հաստատում տեղի մշակութային գործիչների հետ: 1885 թ. նա, Թիֆլիսում, տպագրում է իր ձեռքի տակ եղած բանահյուսական նյութերը՝ «Վանա սագ» ժողովածուում: Թուրքական կառավարության խստագույն վերահսկողության պայմաններում նա շարունակում է իր հավաքչական աշխատանքները հայրենիքում՝ նյութեր գրառելով «Վանա սագ» ժողովածուի 2-րդ հատորի համար: Վանի կոտորածից քիչ անց (1890-ականներին)՝ Կովկաս գաղթողների թվում էր և Շերենցն իր ընտանիքով: Ապաստան գտնելով Նոր Բայազետում՝ իրեն հատկացրած բնակարանում, նրան մեծ անակնկալ էր սպասվում. «Որքան եղավ ուրախությունս, – գրում է Գ. Շերենցը, – երբ այդ հանրային կողոպտված ապրանքներից ազատված տեսա «Վանա սագ»-ի 2-րդ մասի համար պատրաստված նյութերը՝ մեծ մասը պատահողոված»<sup>23</sup>: 1899 թ. Թիֆլիսում նա հրատարակում է «Վանա սագի» 2-րդ հատորը: Հատորում, Վանից բացի, տեղ են գտել նաև Մոկսից ու Շատախից գրառած բազմաժանր նյութերը: Երկու հատորներում էլ ընդգրկված են հրաշապատում և իրապատում հեքիաթներ, առած-ասացվածքներ, անեծք-օրհնանքներ, աղոթքներ ու քնարական բանահյուսության բազմատեսակ ստեղծագործություններ: Ծանոթագրությունները հազեցած են ազգագրական տվյալներով և բարբառային բառերի ստուգաբանական քննություններով: Գրառումներում Շերենցը պահպանել է տեղավայրի բարբառային յուրահատկությունները և Վանի բարբառին բնորոշ ձայնավորների ու բաղաձայնների քննադատական օրենքները:

<sup>21</sup> Գ. Տեր - Ալեքսանդրյան և Գ. Թիֆլիսեցոց մտավոր կյանքը, էջ 334:

<sup>22</sup> Նույն տեղում:

<sup>23</sup> Գ. Շերենց, Վանա սագ, հ. 2, Թիֆլիս, 1899, Առաջաբան:

Ի դեպ, եթե նախկինում Մ. Միանսարյանցը, Գ. Տեր-Ալեքսանդրյանցը և ուրիշները նյութերի դասակարգման խնդրում դիմում էին մասնավոր անձանց խորհուրդներին, որոնց արդյունքում դասակարգումը տարերային, կամային բնույթ էր կրում, ապա Գ. Շերենցը նյութերը դասակարգելիս հետևել է հրատարակչությանը կից «Ընկերության խմբագրական մասնաժողովի կարգադրությանը»: Նման հանձնաժողովի ստեղծումը առաջին լուրջ քայլերից էր՝ նյութերի դասակարգումը միասնական համակարգի բերելու ուղղությամբ:

Թիֆլիսում Շերենցը շարունակում է իր նվիրական գաղափարների իրագործումը՝ ձեռնամուխ լինելով Վան-Վասպուրականի պատմական հուշարձանների, սրբավայրերի նկարագրման աշխատանքներին՝ առանց ձեռքի տակ ունենալու այն սնագիր ձեռագրերը, որոնք դեռևս 1891–92 թթ. պաշտոնապես շրջագայելով տարածաշրջանի ողջ գավառներում, գյուղերում ու ավաններում, տեղագրել էր ու պատրաստել հրատարակության: Նյութերի կորստյան պատճառը, Շերենցի վկայությամբ՝ «Վերջին տխուր դեպքերն են. ինչպես ջարդուփշուր արին մեր բնակավայրի ամեն ինչ, նույնպես և իմ թղթի կտորները, սնագրությունները կուլ գնացին վերահաս հրձիգությանը և ինձանում մնացին լոկ հիշողություններն ու տպավորությունները»<sup>24</sup>: Հայրենիքի յուրաքանչյուր տեղավայրին քաջատեղյակ Գ. Շերենցը հիշողությամբ վերաշարադրում է ավելի քան 76 սրբավայրերի տեղագրությունը և 1902 թ. Թիֆլիսում հրատարակում «Սրբավայրեր» ուշագրավ գրքում:

Թիֆլիսահայ բանագիտության պատմության բնագավառում իրականացվող հիշյալ տեղաշարժերին անհաղորդ չմնաց Երվանդ Լալայանը (1864–1931)՝ 1880-ական թվականների վերջերին, Ախալքալաքում, մանկավարժական աշխատանքներին զուգընթաց, իրականացնելով բանահյուսական նյութերի իր առաջին գրառումները: Դրանք 1882 թ. Թիֆլիսում նա հրատարակեց «Ջավախքի բուրմունք» ժողովածուում: Այդտեղ ընդգրկված են վիպական ու քնարական բանահյուսության մի շարք տեսակներ (առածասացվածքներ, աղոթքներ, ավանդություններ, ժողովրդական տարաբնույթ երգեր՝ սիրո, հարսանեկան, պանդխտության և այլն): Ի դեպ, 1890–1894 թթ. ընդհատվում են նրա բանահավաքչական աշխատանքները. Ե. Լալայանը մեկնում է Ժնև, ուսանում տեղի համալսարանի հասարակագիտական բաժնում, այնուհետև Լոնդոնի համալսարանին կից մանկավարժական դասընթացն ավարտելուց հետո ստանում մանկավարժի որակավորում: 1895–1897 թթ. նա մանկավարժական աշխատանքի է անցնում Շուշիի թեմական դպրոցում, միաժամանակ ձեռնամուխ լինում «Ազգագրական հանդեսի» ստեղծման գործին: Եվրոպական ժողովրդագիտական առաջավոր մեթոդներին քաջատեղյակ Ե. Լալայանի հիշյալ նախաձեռնությունը պայմանավորված էր բանահյուսական, ազգագրական նյութերի հավաքման, հրատարակման, ուսումնասիրման խնդիրների հանդեպ համակարգված մոտեցում՝ ցուցաբերելու, բանահավաքների անհատական գործունեությանն առավել կազմակերպված բնույթ հաղորդելու առաքելությամբ:

<sup>24</sup> Գ. Շերենց, Սրբավայրեր, Թիֆլիս, 1902, էջ 160:

1896 թ., Շուշուում, նա հրատարակում է «Ազգագրական հանդեսի» առաջին համարը:

«Ազգագրական հանդեսի» հրատարակմամբ՝ Ե. Լալայանը քաջ գիտակցում էր բանահավաքչության բնագավառում հայ մտավորականության կողմից իրականացված որոշակի տեղաշարժերի իրողությունը: Հայ մտավորականության ու ժողովրդի միջև արդեն ձևավորված փոխադարձ կապն ու վստահությունը տվել էին իրենց որոշակի արդյունքները: Ժողովրդի մեջ աստիճանաբար վերաբերմունք է ձևավորվում իր իսկ ստեղծած հոգևոր արժեքների հանդեպ. հետզհետե ազգային ինքնագիտակցության զարթոնքի հիմքերն են ամրագրվում: «Ազգագրական հանդեսի» հրատարակման դրդապատճառները հենց հիշյալ գործոններով է պայմանավորում Ե. Լալայանը. «Ընդհանուր ազգային գիտությանը չենք վճռել մի այսպիսի հանդեսի հրատարակությունը: Այսօր մենք հանդես ենք գալիս ոչ միայն մեր ուժի վրա վստահեցած, այլ՝ ազգի ինքնաճանաչողության զգացման: Թերթերի մեջ սփռված և առանձին լույս տեսնող ազգագրական հոդվածները ապացուցում են, որ հայոց ազգն արդեն զարթոնել է խոր քնից և ցանկանում է գիտության ամենիմաստ խոսքը՝ «Ծանիր գրեզ». նա կամենում է ճանաչել իրեն և յուր ազգային հատկությունները վրա հիմնել ազգային զարգացումը: Մեր այս գործը այդ զարգացման արդյունքն է և մեր կոչումը այդ գործին ուղղություն տալ և աշխատողների մեջ միություն ստեղծել: Մեր կոչումն այժմ միայն նյութերի հավաքելն է, որովհետև դրանց պակասության պատճառով գիտական ուսումնասիրություններն անպակաս են»<sup>25</sup>: Առաջին հատորի առաջին իսկ էջերում իբրև առաջաբան նա ներկայացրել է «Համառոտ տեսություն հայ ազգագրության» ծավալուն աշխատությունը<sup>26</sup>: Ազգագրագետ Կարեն Մելիք-Փաշայանը իրավացիորեն գրում է. «Պետք է նկատել, որ 19-րդ դարի երկրորդ կեսին ազգագրությունը և բանահյուսությունը դեռևս տարանջատված չէին, ուստի հեղինակը խոսում է թե՛ բանահյուսության, թե՛ ազգագրության մասին, առավելապես ծանրանալով հոգևոր մշակույթի վրա: Հոդվածը շատ հեռու է ազգագրության համառոտ տեսություն լինելուց»<sup>27</sup>: Հոդվածում, իրոք, Ե. Լալայանն անդրադարձել է բանահյուսության բնույթին, նրա առանձնահատկությունների բացահայտմանը, մասնավորապես՝ Գողթան երգերին ու գրույցներին, որոնք, իր իսկ վկայությամբ, «Հայոց հոգևոր և մտավոր կյանքի փառավոր արշալույսի պայծառ հայելին են»<sup>28</sup>: Հոդվածի սկզբում նա ներկայացնում է իր օգտագործած սկզբնաղբյուրների ցանկը (Գաթրճյան Հ., Պատմություն մատենագիտության հայոց, Վիեննա, 1850, Էմին Մ., Վեպք հնոյն Հայաստանի, Մոսկվա 1850, Պալասսյան Մ., Հայոց բանավոր գրականությունը, Թիֆլիս, 1865 Զարբհանալյան Է., Պատմություն

<sup>25</sup> Ե. Լալայան. Հրատարակչից. – «Ազգագրական հանդես», հ. I, Շուշի, 1896, էջ 5:

<sup>26</sup> Այն, ի դեպ, զեկուցմամբ նա ներկայացրել է 1895 թ. Փարիզի մարդաբանական ընկերության մայիսի 18-ի նիստում. նա հիշյալ ընկերության անդամ էր (տե՛ս նույն տեղում, էջ 7):

<sup>27</sup> Ե. Լալայան. Համառոտ տեսություն հայ ազգագրության. – Երկեր, հ. I, Երևան, 1983, էջ 14:

<sup>28</sup> Ե. Լալայան. Համառոտ տեսություն հայ ազգագրության. – «Ազգագրական հանդես», հ. I, էջ 7:

հայերեն դպրության, 1865, և այլոց աշխատությունները): Նման մոտեցումը պայմանավորված է, անշուշտ, մշակութաբանների միջև գիտագործնական և գիտատեսական կապերի ստեղծման, ամրապնդման անհրաժեշտությամբ:

1900 թ. «Ազգագրական հանդեսի» հրատարակման աշխատանքները նա իրականացնում է Թիֆլիսում: Նույն թվականի նոյեմբերին, դարձյալ Թիֆլիսում, նա հիմնադրում է Ազգագրական հրատարակչական ընկերությունը, որի անդամների թիվը 1905-ին հասնում է 80-ի: Հիշյալ ընկերության գործունեությունն առավել ծավալելու նպատակով՝ այն վերածում է Հայոց ազգագրական ընկերության: «Ազգագրական հանդեսը» հրատարակվում է 20 տարի՝ 26 հատորով: Հանդեսի շուրջ համախմբվել են գիտության ու մշակույթի առաջադեմ մտավորականության ներկայացուցիչներ՝ Մ. Աբեղյանը, Հր. Աճառյանը, Լեոն, Ստ. Լիսիցյանը, Թ. Թորամանյանը, Ս. Ջելինսկին, Կարա-Մուրզան և ուրիշներ:

Ե. Լալայանը «Ազգագրական հանդեսի» հատորներում տպագրել է Հայաստանի տարբեր տեղավայրերից գրառված բազմաթիվ բանահյուսական ստեղծագործություններ (Բորչալու, Վան-Վասպուրական, Ջավախք, Գանձակ, Ջանգեզուր, Լոռի, Ղարաբաղ, Ղարս, Մոկս և այլուր): Ուշագրավ են «Սասնա ծռեր» էպոսի՝ Բայազետի, Վանի, Ալաշկերտի պատումների հայտնաբերումն ու գրառումը: Նրա նշանակալից աշխատանքներից է «Մարգարիտներ հայ բանահյուսության» եռահատոր ժողովածուն (Ա-Գ գրքեր, Թիֆլիս-Վաղարշապատ, 1914-1915 թթ.): 1915 թ. Հայոց ազգագրական ընկերությունը, Ե. Լալայանի գլխավորությամբ, կազմակերպում է գիտարշավ՝ ցեղասպանությունից մազապուրծ արևմտահայ գաղթականներից գրառելու բանահյուսական և ազգագրական նյութեր: Նրա գլխավորությամբ այդ գործին ձեռնամուխ են լինում մտավորականներ՝ Ն. Մարտիրոսյանը, Ե. Պեգազյանը, Ս. Շալճյանը, Ա. Բարսեղյանը, Շ. Կուժիկյանը և ուրիշներ: Հինգ ամսվա ընթացքում նրանք բռնագաղթվածներից գրառել են ավելի քան 900 հեքիաթ, զրույցներ, ավանդություններ և բանահյուսական այլ ժանրի ստեղծագործություններ: 1921 թ. Ե. Լալայանը Թիֆլիսից տեղափոխվում է Երևան, և Հայկական ՍՍՀ Լուսժողովմաստի հիմնադրած Գեղարվեստական թանգարանում ստեղծում է հնագիտական ու ազգագրական բաժինները և դառնում դրանց առաջին վարիչը:

Այսպիսով՝ հայ մտավորականության ջանքերով XIX դ. երկրորդ կեսից ձևավորվել է թիֆլիսահայ բանագիտական մի ուրույն դպրոց, որը մեծ դեր է կատարել հայ ժողովրդական բանահյուսության գրառման, հրատարակման և ուսումնասիրման աշխատանքները համակարգելու, գիտական որոշակի սկզբունքներով ու մոտեցումներով իրականացնելու հույժ կարևոր գործում:

---

ИЗ ИСТОРИИ ФОЛЬКЛОРИСТИЧЕСКОЙ МЫСЛИ  
ТИФЛИССКИХ АРМЯН

*СВЕТЛАНА ВАРДАНИЯ*

Р е з ю м е

Благодаря усилиям армянской интеллигенции (Х. Абовян, Г. Ахвердян, М. Миансарянц, Т. Навасардян, Г. Тер-Александрянц, Г. Шеренц, Е. Лалаян) Тифлиса, во второй половине XIX в. сформировалась своеобразная школа фольклористики тифлисских армян, сыгравшая значительную роль в сборе, публикации и изучении произведений армянского устного народного творчества.

FROM THE HISTORY OF THE FOLK-LORE THOUGHT  
OF THE TIFLIS ARMENIANS

*SVETLANA VARDANYAN*

S u m m a r y

Thanks to the efforts of Armenian intellectuals of Tiflis (Kh. Abovyan, G. Hakhverdyan, M. Miansaryants, T. Navasardyan, G. Ter-Alexandryants, G. Sherents, Ye. Lalayan), in the second half of the 19th century a unique school of the Tiflis Armenians' folk-lore studies was formed that played an essential role in the collection, publication and research of the works of the Armenian people's oral creativity.